



Schleswig-Holstein  
Ministerium für Justiz,  
Europa, Verbraucherschutz  
und Gleichstellung

# Միայն քաջություն!

Բռնի հարաբերություններում  
կանանց համար գործողությունների  
հնարավորությունները



Schleswig-Holstein. Der echte Norden



**Հրատարակված է .**

Շլեզվիգ-Հոլշտայնի արդարադատության նախարար, սպառողների պաշտպանություն  
Լորենցենդամմ 35  
24103 Զիլ

ԿԻԿ Շլեզվիգ-Հոլշտայն,  
Շլեզվիգ-Հոլշտայնի ընտանեկան բռնությունների դեմ  
համագործակցության և միջամտության հայեցակարգ

**Իրացումը:**

Ազատ ոճ մոդիա դեզայն, Կրոնսհագեն  
Լուսանկարներ: Photocase.com  
Նախարարի լուսանկար: Քոննի Ֆեհրե Դրուք :  
ԼՎԿ Ռատյեն, Զիլ  
Այս տեղեկատվական գրքույկը հիմնված է Դուսսելդորֆի կականց  
խորհրդատվական կենտրոնի „Միայն քաջություն“ բրոշյուրի հիման վրա:  
Վերնագիրը և բովանդակությունը Դուսսելդորֆի կանանց  
խորհրդատվական  
կենտրոնը թույլատրում է օգտագործել:

ԻՍՄՆ 0935-4379  
4. հրատարակչություն  
հունիս 2018

Պետական կառավարման ինտերնետային կայք:  
[www.landesregierung.schleswig-holstein.de](http://www.landesregierung.schleswig-holstein.de)

Այս գիրքը պատրաստվել է վերամշակված թղթից:  
Այս հրատարակությունը լույս է տեսնել Շլեզվիգ-Հոլշտայնի պետական  
կառավարման հանրային աշխատանքների շրջանակում: Այն չի կարող  
օգտագործվել ոչ քաղաքական կուսակցությունների կողմից, ոչ  
նախընտրական քարոզարշավի ընթացքում, ոչ նախընտրական կամ  
ընտրակեղծիքների քարոզարշավի մասնակիցների կողմից՝  
ընտրությունների  
գովազդի նպատակով: Նույնիսկ առանց հղում անելով առաջիկա  
ընտրությունների, այս հրապարակումը չի կարող օգտագործվել այնպիսի  
եղանակով, որը կարող է ընկալվել որպես նախասիրության տարածքային  
կառավարության խմբերի համար: Կողմերին թույլատրվում է օգտագործել  
փաստաթուղթն իրենց սեփական անդամներին տեղեկացնելու համար:



**Սիրելի ընթերցող,**

Ընտանեկան բռնությունը, ցավոք, դեռևս տարածված երևույթ է: Եթե դուք նույնպես ձեր զուգընկերոջ կողմից բռնություն, թե՛, նվաստացում կամ վիրավորանք ապրել եք և այժմ ուզում եք փոխել ձեր կյանքը, այս գրքուկը ձեզ որոշ օգտակար խորհուրդներ կտա: Դուք կտեղեկանաք, թե ինչպիսի անձնական և իրավական պաշտպանական միջոցներից կարող եք օգտվել:

2016 թ.-ին Շլեզվիգ-Հոլշտայն հողում տեղի են ունեցել ոստիկանության 3721 գործողություն՝ ընտանեկան բռնության նպատակով: Այսպիսով, 550 հանցագործներ վտարվել են իրենց ընդհանուր բնակարաններից: 2016 թ.-ին 1658 կանայք իրենց երեխաների հետ միասին ապաստան են փնտրել Շլեզվիգ-Հոլշտայն հողում գտնող կանանց համար նախատեսված կացարանում:

Այս փաստերն ու տվյալները ցույց են տալիս, որ Դուք Ձեր ճակատագրի հետ միայնակ չեք, որ Դուք Ձեր բարդ իրավիճակում գտնվելու համար ամաչելու կարիք չունեք: Ավելի շատ պետք է ուժերը արթնացնել, գտնել կենսունակ և անհատական ճանապարհներ գտնել բռնատիրական հարաբերություններից դուրս գալու համար: Ես վստահ եմ, որ այս գրքուկի մեջ ներկայացված առաջարկություններն ու տեղեկությունները կօգնեն Ձեզ նոր ուղիներ փնտրելու մեջ:

Միայն քաջություն է հարկավոր!

**Ձեզ սրտանց ողջունում է**

**դոկտոր Սաբինե Սյութթեռլին-Վաաքը**  
**Արդարադատության նախարար, Եվրոպայի, Շլեզվիգ Հոլշտայն**  
**հողի սպառողների պաշտպանություն և հավասարություն**





Հարաբերություններում կանանց դեմ բռնություն – ի՞նչ է այն – 7

Ի՞նչն է բաժանությունը դժվարեցնում – 9

Բռնության անիվը – 10

Որպես միգրանտ ինչի՞ն պետք է հատկապես ուշադրություն դարձնեմ -12

Պաշտպանությունը ամենակարևորն է ! – 14

Ինչո՞ւ կարող է ինձ պաշտպանել – 16

Ի՞նչ կարող են ինձ համար անել ոստիկանությունը և արդարադատությունը – 20

Ի՞նչ կարող են ինձ համար անել բժշկական մասնագիտությունների տեր հարազատները – 26

Որտե՞ղ կարող եմ ապրել – 29

Ինչո՞վ պետք է ապրեմ – 31

Ի՞նչ է սպասվում երեխաներին – 36

Ինչպե՞ս վարվել հետապնդման դեպքում – 39

Ի՞նչ կարող է անել սոցիալական միջավայրը – 42

Արտակարգ գործի մասնավորապես քաղվածքի ստուգման ցանկը – 43

Վերջին, սակայն ոչ պակաս կարևոր – 44

Օգնության առաջարկներ - 45



# Հարաբերություններում կանանց դեմ բռնություն – ի՞նչ է այն

Հարաբերություններում կանանց բռնությունն ավելի է սպառնում, քան այլ բռնի հանցանքնորում: Ջուզընկերոջ կողմից բռնությունը կոչվում է ընտանեկան բռնություն: Այն հիմնականում տեղի է ունենում «տանը», այսինքն՝ այն վայրում, որտեղ կանայք իրենց ապահով պետք է զգան: Տղամարդկանց 90 տոկոսը հանցանք գործողներն են, իսկ կանայք՝ զոհերը:

Վերջերս կատարված ուսումնասիրությունները հաստատում են, որ առնվազն յուրաքանչյուր չորրորդ կինը կյանքի ընթացքում իր հարաբերություններում ֆիզիկական և/կամ սեռական բռնություն է ապրել: Ընտանեկան բռնություն տեղին է ունենում սոցիալական բոլոր շերտերում, տարիքային բոլոր խմբերում և էթնիկ ծագումներում, առանձնահատուկ ռիսկի գործոնը բարձր է բաժանության փուլում: Երեխաները միշտ էլ տուժում են այդ բռնությունից:

Ի տարբերություն վեճերի, կոնֆլիկտների կամ պարզաբանումների, ընտանեկան բռնության հիմքում ընկած է զուգընկերոջը հսկելն ու իր վրա իշխանություն բանեցնելը: Ջուզերի բռնության այս ձևը հաճախ պայմանավորված է կանանց հանդեպ թշնամական վերաբերմունքի հետ: Հարաբերություններում բռնությունն ընթանում են լարվածության, պայթյունի և զղջման շրջանառությամբ: Հաճախ ամեն ինչ սկսվում է շատ նորմալ, երբեմն նույնիսկ երջանիկ պատահարներով «Դու իմ միակն ես ու ամեն ինչը, առանց քեզ չես կարող ապրել»: Բայց այս անհավասար ուժային հարաբերություններում շուտով մյուս կողմից պարզ է դառնում, որ տղամարդը ավելի շատ սկսում վերահսկել կնոջը, ուզում է ամեն ինչից տեղյակ լինել, կասկածանքների մեջ է, կնոջ ամեն ինքնուրույն քայլ նրա կողմից դիտվում է որպես սպառնալիք: Առաջանում են տեսանելի հարձակումներ, բռնկումներ և հաջորդող փոքրիկ հարձակումներ

ումից զուգընկերը հսկողությունը ստացել է:  
Արտաքին գործոններն են, ինչպիսիք են զայրույթը  
աշխատա-

**Հարաբերության մեջ  
բռնության ոչ մի  
պատճառ չկա:  
Դուք ոչ մի մեղք  
չունեք, մասամբ  
էլ չունեք:**

վայրում, խանդը կամ կյանքի ճնշող իրավիճակները,  
պատաս-խանատու: Հազվադեպ չէ, երբ հանցագործներին  
թաքցնում

կամ ներում են: Կանայք, զուգընկերոջը գոհացնելու համար,  
փորձում են իրենց վախի, շփոթվածության և զայրույթի  
զգաց-մունքները թաքցնել: Նրանք հույս ունեն, որ այդ  
քայլով կարո-

**Բռնության համար  
պատասխատվությունը  
պետք է կրի միայն  
հանցագործը:  
Եթե նա պատրաստ  
չէ դա անել,  
ապա միայն  
մնում է, ինքներդ  
ձեզ և երեխաներին  
հետագա հարձա-  
կումներից պաշտպանել:**

ղանան հետագա բռնությունները կանխել: Այնուամենայնիվ,  
բռնության ուժգնությունը մեծանում է, որը հանգեցնում է  
վնաս-վածքների և ավերվածությունների:

Որին հետևում է ներման փուլը, որտեղ մեղավորը ցույց է  
տալիս, որ զղջում է, հատկանշական է ուշադրությունը կամ  
նվերներ տալը: Ջոհերը և մեղա-վորները այդ փուլերում  
իրենց էնպես են պահում, կարծես ոչինչ չի եղել: Շատ կանայք  
հուսով են, որ սա զուգընկերոջ

«իրական դեմքն» է և կրկին հարձակումներ չեն լինի: Բայց  
շրջանառությունը սկսվում է նորից: Բռնության բռնկումները  
դառնում են ավելի հաճախակի և վտանգավոր: Կանայք  
անընդհատ լինում են անհանգիստ վիճակում, հոգեկան  
ճնշման տակ և սոցիալական միջավայրից մեկուսացված:  
Հաճախ ամուսինը սպառնում է երեխաներին կնոջից  
վերցնելու: Վախի այս հյուսվածքից ելք գտնելը հեշտ չէ, բայց  
այն հնարավոր է: Այս գրքույկը ուղղված է այն մարդկանց,  
ովքեր ցանկանում են տեղեկացված լինել, որ պետք է  
քաջություն ցուցաբերել և ելքեր գտնել բռնություններից  
դուրս գալու համար:

**Հարաբերության մեջ բռնության ոչ մի պատճառ չկա: Դուք  
ոչ մի մեղք չունեք, մասամբ էլ չունեք: Բռնության համար  
պատասխատվությունը պետք է կրի միայն հանցագործը:  
Եթե նա պատրաստ չէ դա անել, ապա միայն մնում է,  
ինքներդ ձեզ և երեխաներին հետագա հարձակումներից  
պաշտպանել:**



# Ի՞նչն է բաժանությունը դժվարեցնում

Շատ կանայք ցանկանում են իրենց հարաբերությունները և սերը փրկել: Նրանք առաջին հերթին փնտրում են լուծումներև հուսով են, որ «նա» կփոխվի: Նրանք, հանուն երեխաների, չեն ուզում «քայքայել» ընտանիքն: Նրանք բաժանվելիս վախե-նում են բռնության պայթյունից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բռնի հարաբերությունից բաժանվելու ժամանակահատվածը համարվում է ամենա-վտանգավորն:

Հաճախ սոցիալական միջավայրն է, որ բարդացնում է տուժած կնոջ իրավիճակն: Սոցիալական կարծրատիպերը և դատապարտումները հանգեցնում են իրավիճակների բարդացմանը:

«Յուրաքանչյուրի ամուսնական կյանքում աղմուկ լիում է» կամ «մեկը մյուսին պրովակացիայի ենթարկում է ...»:  
Ընկերները, հարևանները կամ նույնիսկ հաստատությունները չեն ընդունում բռնի հարաբերություններ կամ տուժողին տեսնում են որպես մեղավոր: Կանանց նկատմամբ բռնությունը թյուրիմացվում է կամ նույնիսկ արդարացվում: Ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որը պաշտպանում է բռնություն գործողին և խանգարում է կանանց օգնություն խնդրելու: Որքան երկար է տևում բռնությունը հարաբերություններում, այնքան ավելի շատ կախվածություն է լինում: Կանայք զգում են, որ չեն կարողանում փոխել իրենց իրավիճակը: Վստահությունը իր անձի և շրջակա միջավայրի նկարմամբ նվազում է:

**Յուրաքանչյուր խորհրդատվական  
կենտրոն ծանոթ է այս դինամիկային  
և կաջակցի Ձեզ ձեր ճանապարհին!**

# Բռնության ձևերը

## Սոցիալական բռնություն

Հսկել կամ արգելել իր բոլոր կապերը, նրան մեկուսացնել ուրիշներից, վերահսկել հեռախոսազանգերը ...

Նրան սոցիալական միջավայրում ստորացնել, երեխաներին օգտագործել 2 որպես ճնշման միջոց, նրան իր իսկ աշխատավայրում ահաբեկել:

## Ֆիզիկական բռնություն

Հրել, ծեծել, տրորել, խեղդել, կապել, այրել, այրել իրերով, կամ վնասել կամ սպառնալ գենքով ...

## Սեռական բռնություն

Բռնաբարություն, նրան սեռական գործողություններ պարտադրել, նրան որպես սեռական օբյեկտի վերաբերվել, պարտադրել պոռնո ֆիլմեր դիտելու

Տնտեսական բռնություն Արգել Արգելել կամ ստիպել աշխատելու, մերժել կա մերժել կամ գումար հատկացնել, վերահսկել վերահսկել իր ծախսերը



Հիմք ընդունելով Ներքին Չարաշահման Միջամտության մոդելը Ծրագիր (DAIP) 1983 թվ

## Հոգեբան Հոգեբանական բռնություն

Վախեցնել, վիրավորել, սպառնալ, տարածել, որ որ նա խելագար է, նվաստացնել և ստորացել նրան...

## Տնտեսական բռնություն

Ֆիլմեր դիտելու Արգել Արգելել կամ ստիպել աշխատելու, մերժել կա մերժել կամ գումար հատկացնել, վերահսկել վերահսկել իր ծախսերը

**Գրաֆիկը ցույց է տալիս, թե ինչպիսի բռնության ձևեր գոյություն ունեն:** Այն պարզ է դարձնում բռնի համակարգի փոխկապակցվածությունը, որտեղ կենտրոնում միշտ էլ իշխանության ուժը և վերահսկումն է ամեն ինչից վեր դրված: Վերջին տարիների ընթացքում թվայնացված բռնությունների դեպքերը դարձել են ավելի տարածված: Զուգընկերները թվային մեդիաներն օգտագործում են կնոջը արժեզրկելու, վերահսկելու, սպառնալու կամ շանտաժի ետարկելու համար: Հնարավոր է

նաև ինտերնետային գաղտնաբառերը կամ հաշվիները կարող են գախտնազերծել: Հաճախ շափոնային ծրագրեր են ներբեռնվում, առանց կնոջ իմաստության: Տեխնիկական հնարավոր է դարձնում ամբողջ հաղորդակցությունն հետևելու, գտնվելու վայրը որոշելու, կարդալու որոնման պատմությունները և այլն ... Հաճախ հանդիպում են նաև դեպքեր, երբ նախկին զուգընկերները թվայնացված սարքավորումները օգտագործում են նաև բաժանումից հետո, կանանց վերահսկելու, սպառալու, վախեցնելու համար:

## Իշխանություն և վերահսկողություն

Կանանց նկատմամբ բռնության ժամանակ կենտրոնում են գտնվում իշխանությունը և վերահսկողությունը: Կանանց նկատմամբ իշխանությունը և վերահսկողությունը պահպանելու և ամրապնդելու համար, օգտագործվում են ճնշման բազմաթիվ ձևեր, որոնք, ի վերջո, հանգեցնում են ֆիզիկական բռնության:



# **Որպես միգրանտ ինչի՞ն պետք է հատկապես ուշադրություն դարձնեն**

**Ընտանեկան բռնությունը, ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական, Գերմանիայում ենթարկվում են պատժի: Սա կիրառելի է նաև այն դեպքում, եթե Ձեզ ստիպողաբար ցանկանում են ամուսնացնել կամ Ձեզ սպառնում է թլպատումը:**

**Թույլ մի տվեք լեզվի խոչընդոտների կամ օտարերկրյա իրավունքների կանոնակարգից ելնելով օգնության համակարգից հրաժարվել: Դուք օգնություն կստանաք կանանց համար նախատեսված խորհրդատվական կենտրոններում, կանանց համար նախատեսված տանը և միգրացիոն խորհրդատվական կենտրոններում:**

**Աշխատակիցները պարտավոր են գաղտնիությունը ապահովել: Նաև այն հարցը, արդյոք բաժանումը կացության կարգավիճակի հետ կապված հետևանքներ կունենա, կարող էք այն հստակեցնել, պարզել զրույցի միջոցով, որը կլինի գաղտնի և ոչ պարտավորեցնող: Հարկ եղած դեպքում կարող են թարգմանիչներ տրամադրվել: Այդ իրավունքը ունեք նաև Դուք որպես փախստական:**

**Կանանց համար նախատեսված խորհրդատվական կենտրոններում, կանանց համար նախատեսված տանը և միգրացիոն սոցիալական խորհրդատվական կենտրոններում առաջարկները անվճար են:**

**Կից ներկայացնում ենք կոնտակտային տվյալները կամ կարող եք զանգահարել**

**Օգնություն առաջարկող հեռախոսահամարին  
08000 116016**

**Եթե Ձեր ամուսինը Ձեզ հետ կոպիտ է վարվել, կարևոր է այդ վնասվածքները բժշկուհու կամ բժշկի կողմից գրավոր հաստատել, նույնիսկ, եթե դեռ նրա դեմ հետագա գործողություններ ձեռնարկել չեք ցանկանում: Տեղեկացրեք մեզ, թե Ձեզ հետ ի՞նչ է պատահել:**

**Դուք Ձեր վնասվածքները կարող եք նաև Շլեզվիգ-Հուլշտայնի համալսարանական կլինիկայում (ՌԻԿՍՀ) կամ Հպպենդորֆի համալսարանական կլինիկայում (ՌԻԿԵ) փաստագրել: Այս մանրամասն փաստագրությունները կարող են ներկայացվել պետական գրասենյակներ (օրինակ՝ ըստ § 31-ի արտերկրացիների համար նախատեսված օրենսգրքի շրջանակներում) կամ դատական վարույթի համար:**

**Վնասվածքների արագ և պատշաժ փաստագրությունների համար դիմել՝**

**Շլեզվիգ-Հուլշտայնի համալսարանական կլինիկա (ՌԻԿՍՀ)  
Քիլի մասնաճյուղ՝ 0431-500-15901  
Լյուբեկի մասնաճյուղ՝ 0451-500 159 51**

**կամ Հպպենդորֆի համալսարանական կլինիկա (ՌԻԿԵ)  
Համբուրգի մասնաճյուղ՝ 040-74010 52 127**

# Պաշտպանությունը ամենակարևորն է



Երբ խոսքը բռնությանն է վերաբերում է, զոհի պաշտպանությունը ամենակարևորն է: Այն ամենը, ինչ արվում է կամ չի արվում, պետք է առաջնորդվի պաշտպանության անհրաժեշտությունից:

Դուք որպես անմիջական շահագրգիռ կողմ, փորձագետ եք ձեր սեփական պաշտպանության հարցերով, քանի որ միայն դուք գիտեք ձեր ամուսնուն և այն իրավիճակը, որտեղ դուք ապրում եք: Արեք ամեն ինչ, որն կավելացնի ձեր սեփական անվտանգությունը: Եթե դուք վախենում եք, ապա այն լուրջ ընդունեք: Դա նշան է, որ

Ձեզ սպառնում են: Դուք հնարավորություն ունեք ձեր տարածքում կանանց խորհրդատվության կենտրոն ընտրելու, որը հասանելի է օրվա ընթացքում (տես հավելվածը): Գիշերը, հանգստյան օրերին և շաբաթ-կիրակի օրերին, կարող եք զանգահարել 0800-0116016 հեռախոսահամարով: Նաև կարող եք զանգահարել, եթե ունեք որևէ կասկած ձեր իրավիճակի մասին: Կարևոր է, բռնությունը վաղաժամ ընկալել:

## „Բացահայտել առեղծվածը“

Այն թաքցնելը ձեզ չի օգնի, այլ միայն հանցագործին: Շատ կանանց համար դա ամոթալի և տհաճ է ամուսնու բռնության մասին խոսելու համար: Նույնիսկ, եթե վախենում եք ոստիկանությանը կամ դատախազությանը տեղեկացնել, ասեք այն մարդկանց, ում վստահում եք, ընկեր, ընկերուհիներին, հարևաններին, գործընկերներին, հարազատներին կամ դիմեք կանանց խորհրդատվության կենտրոնին կամ կանանց հարցերով զբաղվող կացարանը (հասցեները, տես հավելվածը): Կանանց հարցերով զբաղվող կացարանը կարող է Ձեզ և Ձեր երեխաներին օր ու գիշեր ընդունել:

# **Դուք պետք է որոշեք, թե ո՞րն է ձեզ համար ճիշտ՝ անհատական դեպքերում: Միայն այդ կերպ կարող եք ձեր կյանքը, ձեր առողջությունը և ձեր երեխաներին պաշտպանել:**

Այն թեթևացնում է և կարող է նաև օբյեկտիվորեն բարձրացնել ձեր պաշտպանությունը: Որքան շատ մարդիկ իմանան բռնության մասին, այնքան շատ մարդիկ կարող են ձեզ ուշադիր լինել:

## **Անվտանգության հատուկ նախազգուշական միջոցառումներ**

Այն հնարավորությունից բացի, որ բռնությունից կարելի է փախչել վստահելի մարդկանց մոտ կամ կանանց համար նախատեսված կացարան, կան նաև այլ նախազգուշական միջոցառումներ, որոնք կպաշտպանեն ձեզ (և ձեր երեխաներին):

Դա կարող է զանգ լինել ոստիկանությանը կամ „արտակարգ իրավիճակների ճամպրուկ „ պատրաստում: (տե՛ս էջ 43)

## **Դրանից ելնելով, տուժած կանայք հետևյալն են նկարագրել որպես օգտակար խորհուրդ .**

- Վստահելի մարդկանց տեղեկացրեք և խնդրեք, պարբերաբար կամ հատկապես վտանգ սպասվող ժամերին Ձեզ զանհառաբար կամ Ձեզ այցելել
- Հավաքել բժշկական ատտեստեր, իրավաբժշկական փաստաթղթերը
- Ձեռք բերել Դուռը փակվող սենյակ
- Սեփական անվտանգ բջջային հեռախոս ձեռք բերել, որով արտակարգ իրավիճակների դեպքում կարող եք օգնություն խնդրել
- „Արտակարգ իրավիճակների ճամպրուկ“ կարևոր փաստաթղթերով և անհրաժեշտ հագուստով Ձեր (և Ձեր երեխաների համար) տեղափոխեք:

# Ի՞նչը ինձ ևս կարող է պաշտպանել .

## Սեփական անձի պաշտպանության միջոցներից բացի, դուք նաև կարող եք օգտագործել քաղաքացիական պաշտպանության տարբերակներ:

Մասնավորապես կարող եք.

- պաշտպանության հրաման
- բնակարանը միայնակ շահագործման հատկացումը
- երեխաներին միայնակ խնամակալության և կացության իրավունքի թույլտվությունը
- դատարանում դիմում ներկայացնել երեխաներին մոտենալու իրավունքի սահմանափակման համար

Դրանից բացի, Դուք իրավունք ունեք վնասի փոխհատուցման և ցավի համար նախատեսված գումար ստանալու:

Պաշտպանության հրամանը և բնակարանի հատկացումը միայնակ շահագործման համար համարվում են պաշտպանության միջոցառումներ՝ բռնության դեմ: Օրենքի հնարավորություններից կարող են օգտվել բոլորը:

## Բնակարանի հատկացումը միայնակ շահագործման համար

Դուք կարող եք պահանջել, որ Ձեր ընդհանուր շահագործման բնակարանը Ձեզ տրամադրեն Ձեր միայնակ շահագործման համար: Այն հնարավոր է նաև, եթե դուք արդեն Ձեր ընդհանուր շահագործման բնակարանից արդեն փախել եք: Այնուամենայնիվ, հանցագործությունից հետո երեք ամսվա ընթացքում պետք է գրավոր կերպով Ձեր նախկին զուգընկերոջից (ամուսնուց) բնակարանի փոխանցման պահանջ ներկայացնել, մասնավորապես, այդ ժամանակահատվածում այդ պահանջով դիմել դատարան: Դուք հայտ ներկայացնել կարող եք միշտ, եթե ձեր (նախկին) զուգընկերը Ձեզ շահագործել կամ շահագործում է:





Անկախ նրանից, արդյո՞ք դուք ամուսնացած եք, թե ոչ, արդյո՞ք ձեր (նախկին) զուգընկերը մենակ կամ երկուսով եք ստորագրել Ձեր բնակարանի վարձակալության պայմանագիրը, թե արդյոք բնակարանը պատկանում է Ձեզ թե Ձեր զուգընկերոջը: Եթե Դուք մենակ եք վարձակալում բնակարանը կամ բնակարանի սեփականատերն եք, ապա բնակարանի հատկացումն կատարվում է առանց ժամանակային սահմանափակման: Եթե Դուք բնակարանի վարձակալը կամ բնակարանի (համասեպականատերն) չեք, բնակարանը կարող է միջև 6 ամիս ժամանակահատվածով փոխանցվել Ձեզ: Սակայն, դուք պետք է հաշվի նստեք (օրինակ, վարձակալության դեպքում) սեփականատիրոջը վճարելու հետ: Ժամկետը կրկին կարող է երկարաձգվել մինչև վեց ամիս կտրվածքով:

## Պաշտպանական հրաման

**Դատարանը Ձեր իսկ պաշտպանությունից ելնելով կարող է մեղավորի դեմ ավելի շատ միջոցառումներ կիրառել:**

**Դրանցում կարող են ներգրավված լինել, որ Ձեր (նախկին) Զուգընկերը**

- Ձեր բնակարան մուտք գործել չի կարող
- Չի կարող մոտենալ ձեր բնակարանին
- Չի կարող գտնվել այնպիսի վայրերում, որտեղ Դուք հաճախ եք լինում (օրինակ, Ձեր աշխատավայրում, մանկապարտեզում)
- Չկարողանա կապ հաստատել Ձեզ հետ, ոչ անձամբ, ոչ հեռախոսով, ոչ սմս-ով կամ ոչ էլ էլեկտրոնային փոստով

Պաշտպանությունն ապահովող այս հրամանները ժամանակային առումով սահմանափակ են, բայց կարող են դիմումի հիման վրա երկարաձգվել:

## Որտե՞ղ պետք է դիմեմ

Պաշտպանության հրաման ստանալու համար դիմեք տեղի՝ Ձեր համար պատասխատու՝ առաջին ատյանի դատարանին: Այնտեղի ընտանեկան հարցերով դատարանն է պատասխանատու այս հարցի համար: Դատարանը սկզբունքորեն կարող է հանդես գալ միայն Ձեր դիմումի համաձայն: Դիմումը կարող էք ներկայացնել փաստաբանի աջակցությամբ կամ նույնիսկ առաջին ատյանի դատարանում՝ դիմումը ներկայացնելու վայրում: Եթե դուք չունեք եկամուտ, կամ էլ ցածր եկամուտ ունեք, կարող էք դիմել իրավական ծախսերի համար օգնություն ստանալու: Կախված Ձեր եկամտի իրավիճակից, թե ինչքան գումար Ձեզ արդյոք կարժենա:

## Որքա՞ն արագ է որոշում կայացնում դատարանը

Ընտանեկան բռնության դեպքերում, եթե դեռ հարաբերությունը գոյություն ունի, վնասի վտանգը շարունակում է մնալ: Եթե այդպես է, դուք կարող էք դիմել դատավարական պաշտպանությանը պրոցեսն արագացնելու համար: Նման դիմումը կարող է ընթացքի մեջ դրվել մոտավորապես 24 ժամվա ընթացքում: Այս գործընթացը կարող է հետաձգվել, որպիսի ձեր (նախկին) զուգընկերոջը ընկերոջը հարցաքննելու հնարավորություն լինի: Այն սովորաբար ավելի ուշ է լինում, քան դատալսման ամսաթվին: Պաշտպանական հրամանը ստանալու համար դուք պետք է համոզիչ կերպով ներկայացնեք ձեր պահանջը: Դուք պետք է հստակ ամիս, ամսաթվով, ժամով նկարագրեք, թե ինչպես է Ձեր հանդես Ձեր նախկին զուգընկերը ոտնձգություններ կատարել: Անգամ, եթե, դժվարանում եք: Փորձեք հստակ և մանրամասն նկարագրել: Ձեր ներկայացրածը պետք է հանձնեք երդման տեսքով: Թե երդման ձևերից որն է հարկավոր, հարցրեք ձեր փաստաբանին կամ առաջին ատյանի դատարանի դիմումի ներկայացման վայր: Որպես կանոն, հանցագործության նկարագրությանը կցվում է հետևյալ «Ես,

(ձեր անունը, ազգանունը), հավաստիացնում եմ, որ ծանուցված եմ կեղծ երդում հանձնելու դեպքում կենթարկվեմ քրեական պատասխանատվության ենթարկելու համար»: Երդման բացատագրից բացի, լավ է, լրացուցիչ ապացույցներ ունենալը, (ոստիկանության հաշվետվություններ, վկաներ, բժշկական հավաստագրեր կամ նմանատիպ փաստաթղթեր): Տեղեկացեք Ձեր իրավաբանից կամ առաջին ատյանի դատարանի իրավական դիմումը ներկայացնելու վայրից, թե ինչ ճանապարհով կարող եք դիմումի որոշման պատասխանը ստանալ և ինչպես այն կհանձնվի Ձեր նախկին զուգընկերոջը: Դատարանը կարող է հրաման արձակել, որ պաշտպանության հրամանն էլ նաև իրավական ուժի մեջ կմտնի, մինչև Ձեր նախկին զուգընկերոջն հանձնելը: Այն երաշխիքն է այն բանի, որ պաշտպանական միջոցառումն Ձեր ամուսնու բացակայության դեպքում էլ կարող է իրավական ուժի մեջ մտնել:

## **Ի՞նչ է տեղի կունենա, եթե իմ (նախկին) զուգընկերը պաշտպանության հրամանին չհետևի**

Եթե Ձեր զուգընկերը պաշտպանության հրամանին խախտի, ապա դուք կարող եք առանց նոր դատավարության պահանջի դատարան հրավիրել դատական կատարածուի, ով պաշտպանության հրամանը նորովի իրավական ուժի մեջ կմտցնի: Դատական կատարածուն ոստիկանության օգնությամբ կարող է Ձեր նախկին զուգընկերոջն պատասխանատվության կանչել: Դրանից բացի, Դուք հնարավորություն ունեք դատարանին դիմելու կարգապահական տույժ և կարգապահական պատասխանատվություն կիրառելու համար: Եթե մեղավորը խախտի դատական պաշտպանության հրամանը, նույնպես կենթարկվի պատասխանատվության: Դուք պետք է ոստիկանությանը տեղեկացնեք պաշտպանության հրամանը խախտելու մասին, որպեսզի նրանք կարողանան քրեական գործ հարուցել Ձեր (նախկին), զուգընկերոջ դեմ:

# Ի՞նչ կարող է ինձ համար անել ոստիկանությունը և արդարադատությունը

## Արտակարգ իրավիճակների դեպքում՝ զանգահարել 110

Ձեր զուգընկերոջ բռնի ուժ գործադրելու դեպքում, Ձեր իսկ պաշտպանության համար մի հապաղեք դիմել ոստիկանությանը՝ զանգահարելով 110 հեռախոսահամարով: Սուր վտանգավոր իրավիճակներում ոստիկանության առաջադրանքն է պաշտպանություն ապահովել բռնությունից : Ահազանգի դեպքում ոստիկանությունը պարտավոր է գալու և կանխելու հետագա բռնության գործողությունները: Ոստիկանությունը Ձեզ առանձին կհարցաքննի և Ձեզ հնարավորություն կտրվի իրավիճակը ներկայացնելու, նկարագրեք, ինչ տեղի է ունեցել, հաղորդեք վնասվածքների մասին, որոնք հնարավոր է տեսանելի չլինեն, նշեք վկաների անուններ, եթե հնարավոր է: Ձեր ապահովության համար Դուք ունեք նաեւ այլընտրանք՝ ոստիկանության ուղեկցությամբ դեպքի վայրից դուրս գալու և օրինակ կանանց համար նախատեսված ապաստարան գնալու:.

## Ոստիկանական վտարում

**Եթե կա վտանգ, որ հանցագործը Ձեր և Ձեր երեխայի հանդեպ կրկին բռնի գործողություն կկիրառի, ապա նրան վտարումը և նրան բնակարան մուտք գործելու արգելքը կարող է տևել մինչև 14 օր.**

Ոստիկանությունը կարող է հանցագործին բնակարանից վտարել, նրանից բանալին վերցնել և նրան հետագայում արգելել մուտք գործելու բնակարան: Եթե կա վտանգ, որ հանցագործը Ձեր և Ձեր երեխայի հանդեպ կրկին բռնի գործողություն կկիրառի, ապա նրան վտարումը և նրան բնակարան մուտք գործելու արգելքը կարող է տևել մինչև 14 օր: Դրանից ելնելով, ոստիկանությունը կարող հանցագործին արգելել մոտենալ Ձեզ և Ձեզ հետ կապ հաստատել: Այս արգելքը նաև վերաբերվում է Ձեր գտնվելու վայրին (օրինակ՝ աշխատավայրին): Եթե ոստիկանությունը Ձեր զուգընկերոջը տանից վտարի,

# 110

**Ոստիկանության  
արտակարգ իրավիճակների  
հեռախոսահամար:  
Դուք ազատեղ անմիջապես  
կատանաք շուրջօրյա  
օգնություն**

ապա Ձեզ այդ մասին կտեղեկացնեն տեղի կանանց խորհրդատվական կենտրոնից: Խորհրդատվական կենտրոնը իր կողմից կկապնվի Ձեզ հետ, օգնություն և աջակցություն կառաջարկի և Ձեզ կտեղեկացնի Ձեր իրավական հնարավորությունների մասին:

## Հայ

Տղամարդկանց կողմից բռնությունը կանանց դեմ անօրինական է և համարվում է որպես (լուրջ կամ վտանգավոր) մարմնական վնասվածք, բռնաբարություն, պարտադրանք կամ սպառնալիք: Եթե Դուք դարձել եք հանցագործության զոհ, կարող եք ոստիկանության բաժանմունքում բանավոր կերպով քրեական հայց ներկայացնել : Եթե այլ անձիք էլ են տեղյակ Ձեր զուգընկերոջ հանցագործությունների մասին, նրանք նույնպես կարող են բողոք ներկայացնել: Կարող եք նաև Ձեր քրեական հայցը անմիջապես դատախազությանը ներկայացնել: Այստեղ, խորհուղ է տրվում այն կատարել գրավոր կերպով: Հայցը ներկայացնելիս նկարագրեք, թե ի՞նչ է Ձեզ հետ պատահել: Դուք պետք է միջադեպի օրը, ժամը, գործողությունը նկարագրեք, շահավետ է նշել հնարավոր վկաների անուններ, ինչպես նաև այլ ապացույցներ, օրինակ՝ բժշկական վկայագրեր կամ լուսանկարներ, որում պատկերված են վնասվածքներ: Դուք նաև հնարավորություն ունեք, վնասվածքները դատաբժշկական փորձաքննության ենթարկելու: Այստեղ խորհրդատվական կենտրոնը կարող է Ձեզ օգնել: Եթե ցանկանում եք, հայցը ներկայացնելիս կարող եք նաև Ձեզ հետ վերցնել Ձեր կողմից վստահելի անձի:

## Ի՞նչ է սպասվում հայցը ներկայացնելուց հետո

### Կատարեք գրառումներ դեպքերի մասին

Հանցագործության մասին հաղորդումից հետո ոստիկանությունը և դատախազությունը սկսում են հետաքննել: Ամենից առաջ սա նշանակում է, որ բոլոր ներգրավվածները գործընթացի մասն են կազմում: Քանի որ, Ձեզանից բացի, հանցագործության վկաներ չկան, Ձեր վկայության նշանակությունը դառնում է շատ կարևոր: Պատմեք սկզբից, Ձեր զուգընկերոջ նախորդ բռնությունների և սպառնալիքների մասին: Նշեք բոլոր անձանց անունները, ովքեր կարող են տեսած կամ լսել լինել հանցանքի մասին, հնարավորության դեպքում ներկայացրեք բժշկական վկայագրեր (նաև հին) վնասվածքների և հետևանքների վերաբերյալ: Կատարեք գրառումներ դեպքերի մասին: Նշեք ճշգրիտ հանգամանքները (ամիսը, ամսաթիվը, ժամանակը, վկաները), սպառնալիքները կամ բռնի գործողությունները: Ձեր փաստաթղթերը կօգնեն Ձեզ ավելի ուշ՝ դատական գործընթացի ժամանակ: Սակայն նախորդ վեճերի վերաբերյալ ոստիկանության հաղորդումները նույնպես շատ կարևոր են: Ձեր (նախկին) զուգընկերը կհարցաքննվի: Դրանից հետո դատախազությունը կորոշի, թե ինչպես կշարունակվի դատավարությունը: Այս որոշումը հիմնականում կախված է հետաքննության արդյունքից, հատկապես, տրամադրության տակ գտնվող ապացույցից և պատժի ծանրության չափից:

## Դատախազության քրեաիրավական գործընթաց

Ընտանեկան բռնության «քիչ լուրջ» դեպքերում, կարող է դատախազությունը հանցագործին հանձնարարել մամնակցել սոցիալական վերապատրաստման դասընթացի: Այնտեղ նա կարող է սովորել փոխելու իր վարքը և բարելավել իր ինքնակառավարումը: Եթե Ձեր զուգընկերը չենթարկվի այս պահանջին, քրեական գործի ընթացքը կշարունակվի:

Ընտանեկան բռնության ծանր դեպքերում, երբ մեղադրյալի դատապարտումը բավականաչափ հիմքերի վրա հավանական է, դատախազությունը մեղադրանք է առաջադրում, որին հետևում է շրջանային կամ վարչական դատարանում բանավոր դատը, որտեղ Դուք որպես վկա հանդես կգաք: Բացի այդ, Դուք հնարավորություն ունեք համանվիր հայցվորներ լինելու (տե՛ս ստորև) և ակտիվորեն մասնակցել գործընթացին: Բանավոր դատալսումների ժամանակ բոլոր վկաների վկայությունները լսվում են և ներկայացվում բոլոր ապացույցները: Վերջում դատական վճիռն է կայանում: Որպես վկա, Ձեզ կհրավիրեն դատալսմանը և Դուք պետք է վկայություն տաք: Միայն որպես մեղադրյալի հարազատ, նշանած, կին կամ ամուսնալուծված կին, իրավունք ունեք ցուցմունքից հրաժարվելու (այսինքն, հայտարարություն անելուց): Շատ դեպքերում Դուք հանդիսանում եք որպես գլխավոր վկա, քանի որ հարաբերություններում բռնություն հազվադեպ է տեղի ունենում, երբ ներկաներ են լինում: Ձեր վկայությունը շատ կարևոր է իրավապահ մարմինների համար:

**Եթե դատախազությունը մեղադրանք է առաջադրում, շատ դեպքերում Դուք հանդես եք գալիս որպես կարևոր վկա և կարող եք ստանալ աջակցություն**

## Աջակցություն գործընթացում

Կարևոր է դատավարությանը նախապատրաստվել: Շատ կանայք վախ են ունենում հանցագործի հետ կրկին հանդիպելուց: Ցավոտ հիշողություններ ևս մեկ անգամ ճնշող մթնոլորտում՝ դատական դահլիճում ներկայացնելը և այդ ամենը կրկին վերապրելը շատ կանանց համար ծանր է: Դուք մենակ չեք: Կան հետևյալ հնարավորությունները

## Գործընթացի նախապատրաստումը

Կանանց խորհրդատվական կենտրոնները առաջարկում են Ձեզ Ձեր ճանապարհին աջակցելու. Ձեր խորհրդականը կանգնած է Ձեր կողքին բոլոր հարցերի և մտահոգությունների համար: Այս աջակցությունը շատ կանանց համար կարևոր է,

որպիսի հաղթահարեն այն երկար ժամանակ, որը իր հետ բերել է նման ընթացակարգ:  
Վախերը, ցավալի հիշողությունները ու շփոթմունքը, որոնք հաճախ Ձեզ հետ են, դժվար է մենակ հաղթահարել:  
Վերապատրաստված խորհրդատուները կօգնեն Ձեզ նվազեցնելու Ձեզ ճնշող ներքին և արտաքին ցավը:

## **Ընթացակարգը՝ սոցիալ հոգեբանական ուղեկցությամբ**

Մեկ այլ հնարավորություն է գործընթացը սոցիալական-հոգեբանական ծառայությամբ: Սա տուժողին ուղեկցելու հատուկ ձև է քրեական դատավարության ընթացքում, որը ո՛չ իրավաբանական խորհրդատվություն է պահանջում, ո՛չ էլ քրեական գործի թանուցմանն է ծառայում: Այն անվճար ուղեկցություն և օգնություն է մասնագետի կողմից՝ հայքը ներկայացնելուց մինչև դատի ավարտը: Ողջ ընթացակարգի ընթացքում Դուք համարվում եք կոնտակտային անձ: Մասնագետը Ձեզ նախապես կձանուցի իրավունքների և պարտականությունների մասին, նա իրավունք ունի Ձեզ վկայությունների ժամանակ ուղեկցելու և գլխավոր դատավարության ժամանակ Ձեր կողքին կանգնելու: Ձեր տարածաշրջանում Ձեր համար պատասխանատու կոնտակտային անձի տվյալները կարող եք գտնել գրքուկի վերջին էջում:

## **Միջնորդություն**

Որպես որոշակի հանցագործությունների զոհ, Դուք իրավունք ունեք ներկայացուցիչ ունենալու: Սա հնարավորություն է կտա ինքներդ Ձեզ կամ Ձեր փաստաբանի կողմից որպես ներկայացուցիչ ընթացակարգին ակտիվորեն մասնակցելու: Միջնորդության համար Դուք կարող եք դիմել





փաստաբանի: Նա էլ միջնորդության հաստատման համար համաձայանագիր կներկայացնի: Որպես միջնորդ ներկայացուցիչ, Ձեզ տրվում են բազմաթիվ իրավունքներ: Օրինակ, Դուք իրավունք ունեք հարցեր ուղղելու, ինչպես գործում ներգրավված մյուս մասնակիցները, Ձեզ միշտ կիրավիրեն դատալսմանը մասնակցելու, կարող եք մասնակցել ողջ դատական բանակցություններին, եթե նույնիսկ հրապարակայնությունը բացառվի: Այդ իրավունքը Ձեզ տրվում է նաև, եթե Դուք միջնորդ ներկայացուցիչ լիազորված անձն եք համարվում, անգամ եթե Դուք ինքներդ միջնորդությունը չեք ներկայացրել: Ձեր իրավաբանը կարող է դատական ակտը տեսնել, դա նշանակում է, Դուք կարող եք կտեղեկանալ, ի՞նչ է հետաքննվել և դատավարությանը ի՞նչ կներկայացվի: Ձեր փաստաբանը կարող է Ձեր իրավունքները առաջադրել, օրինակ, ապացույց հանդիսացող դիմումներ ներկայացնել, հրամաններ կամ հարցեր առաջադրել, որպիսի Ձեզ որպես վկա վկայության ժամանակ պաշտպանի և աջակցի: Միջնորդ ներկայացուցիչ թախսերը որոշ դեպքերում կարող են վճարվել հանրային դրամարկղի կողմից: Օրինակ, այն կարող է սեռական հանցագործությունների գոհերի դեպքում լինել: Եթե եկամուտ չունեք կամ այն բավարար չէ, Ձեզ ընթացակարգի

**Որպես միջնորդ  
ներկայացուցիչ  
Դուք ունեք  
բազմաթիվ  
իրավունքներ.**

# Ի՞նչ կարող են ինձ համար բժիշկ մասնագետներն անել



**Բռնությունը միշտ էլ վնասում է զոհի առողջությանը: Հետևանքներն տեսանելի են վնասվածքներից, օրինակ՝ ոսկրերի կոտրվածքից, ծակած կամ այրված վերքերից, մինչև քնելու և ուտելու խանգարումներից, վախերից կամ այլ տրավմատիկ խանգարումներից: Վաղ թե ուշ, գրեթե բոլորը տուժածները դիմում են բժշկի կամ բժշկական հաստատության: Իհարկե, սուր վնասվածքների ապահովումը բացարձակ առաջնային է: Օպտիմալ բուժման համար, կարող է կարևոր լինել, որ Դուք Ձեր բուժող բժիշկին, բուժ աշխատողին կամ գուցե դեղագործին պատմեք, որտեղից են Ձեր վնասվածքները ի հայտ եկել: Ձեր բժիշկը կամ բժշկուհին Ձեր հարցերը լուծել չեն կարող, բայց նրանք կարող են Ձեզ օգնություն առաջարկել**

## Վնասվածքների հետևանքների արագ և պատշաճ փաստագրում

- Շլեզվիզ Հոլշտայն հողի համալսարանական կլինիկա (ՌԻԿՍԷ)
  - Զիլի մասնաճյուղ: 0431-500 15901
  - Լյուբեկի մասնաճյուղ: 0451-500 15951

- Էպպենդորֆի համալսարանական կլինիկա (ՌԻԿԵ)
  - Համբուրգի մասնաճյուղ : 040-7410 52127

## Վնասվածքների փաստագրում

Այնուամենայնիվ, բուժումից և համապատասխան խնամքից և թերապիայի բացի, բժիշկները կարող են նաև ևս մեկ կարևոր ներդրում կատարել, դա է վնասվածքների փաստագրումը: Այս փաստագրումը կատարված ղեպքի մասին տեղեկություններ կտա: Դա կարող է կարևոր լինել քրեական (ծանուցման) համար, ինչպես նաև քաղաքացիական գործողությունների (վնասների, ցավի փոխհատուցման համար) և ամրապնդի Ձեր դիրքերը: Այս առումով, Ձեր վնասվածքների վերաբերյալ ճշգրիտ փաստագրումը կարող է կարևոր լինել դատական վարույթի համար կամ այն կարող է նաև ըստ կացության մասին օրենքի ներկայացվել պետ գրասենյակներին: Եթե Դուք բռնություն գործադրողի դեմ հայտարարություն ներկայացնեք, դա փաստացի ապացույց կլինի դատական գործընթացում: Կարևոր է, որ վնասվածքները անհապաղ և բանիմաց կերպով նկարագրվեն և գուցե նաև լուսանկարվեն: Մինչ այժմ դրա համար հաճախ բուժող բժշկից հարկավոր է եղել վկայագիր: Այնուամենայնիվ, բժիշկները մի շարք պատճառներով միշտ չէ, որ դա կարող են իրենց թույլ տալ: Դրա համար էլ գոյություն ունի դատաբժշական փաստագրությունը: Այս հնարավորությունը տրվում է Շլեզվիզ

**Շլեզվիզ-Հոլշտայնի համալսարանական կլինիկայի դատաբժշկական ինստիտուտում կամ Էպպենդորֆի համալսարանական կլինիկայում Դուք կարող եք անվճար գննում ստանալ և որպես ապացույց այն ներկայացնել դատարանին: Սեղմ ժամկետում Կարողեք պայմանավորվածություն ձեռք բերել!**

բռնությունից հետո հետքերի հաստատման ուղղությամբ են մասնագիտացված: Այս եզրակացությունը դատարանում անձեռնմխելի է: Դուք կարող եք այնտեղ անվճար հետազոտվել և ապացույցները փաստագրել: Դրա համար պետք է կարճ ժամանակահատվածում հանդիպման պայմանավորվածություն ձեռք բերեք (էջ 27): Դատաբժիշկներն էլ են ենթակա գաղտնիության ապահովության համար և Ձեր կամքին հակառակ իրավունք չունեն կատարված եզրակացությունը ոստիկանությանը հանձնելու: Դատաբժշկի հետ կարող է նաև Ձեր բուժող բժիշկը կապ հաստատել:

## Գաղտնի դատաբժշկական փորձաքննություն

Շատ կանայք հանցագործությունից անմիջապես հետո դժվարանում են որոշում կայացնելու, արդյ՞ոք հանցագործի դեմ քրեական մեղադրանք ներկայացնել, թե՞ ոչ: Գուցե Ձեզ դա այդ ընթացքին կարևոր էլ չի թվում: Սակայն, Ձեր որոշումը կարող է հաջորդ ամիսներին փոխվել: Հետագայում դժվար կլինի բժշկական եզրակացություն կամ փաստագրում կատարելը: Որպիսի հետագայում այս ուղին օգտագործել կարողանաք, կարևոր է, հետքերն ապահովելու/ամրագրելու, որոնք կարող են հայտնաբերվել միայն հանցագործությունից հետո՝ կարճ ժամանակահատվածում: Այս հնարավորությունը կատարվում է գաղտնի դատաբժշկական փորձաքննության միջոցով, որը նույնպես կարատվում է Շլեզվիգ-Հոլշտայնի կամ Էպպենդորֆի համալսարանական կլինիկայում: Պետք է կարճ ժամանակահատվածում հանդիպման պայմանավորվածություն ձեռք բերեք: Նաև այս հետազոտությունը և դատաբժշկական փորձաքննությունը կատարվում է անվճար և դատաբժիշկները ենթակա են գաղտնիության ապահովության համար:.

# Որտե՞ղ կարող եմ ապրել

## Կանանց համար նախատեսված կացարան (Frauenhaus)

Եթե Դուք Ձեր զուգընկերոջ բռնությունից անմիջապես հետո ստիպված եք փախչել, կարող եք փորձել մնալ ընկերների, գործընկերների կամ հարազատների մոտ կամ դիմել կանանց համար նախատեսված կացարան: Կանանց համար նախատեսված կացարանը շուրջօրյա բաց է, գտվելու վայրի հեռախոսահամարը կարող եք գտնել այս գրքուկի վեջին էջերում: Կանանց պաշտպանության համար հասցեները գաղտնի են պահվում: Եթե Դուք զանգահարեք և կացարանում ազատ տեղ լինի, անմիջապես հանդիպման պայմանավորվածություն ձեռք կբերվի: Ազատ տեղ չլինելու դեպքում, կարող եք մոտակայքում գտնվող մեկ այլ կանանց համար կացարան դիմեք: Կանանց համար նախատեսված կացարաններում կանայք ընդունվում են իրենց երեխաների հետ: Դուք անյտեղ կհանդիպեք այլ կանանց հետ և կկազմակերպեք Ձեր օրվա ռեժիմը: Այնտեղ կան պատրաստված և իրավասու աշխատողներ, ովքեր Ձեզ խորհուրդներ կտան և կաջակցեն: Ձեր բոլոր գործերը կարող եք այնտեղից կազմակերպել, աշխատանքի գնալ, եթե վստահ եք, որ իրավիճակը անվտանգ է, կարող եք Ձեր երեխայի համար դպրոց կամ մանկապարտեզ կարգավորել:

## Համատեղ բնակարան

Շատ կանանց համար, հատկապես, ովքեր երեխաների հետ են, լավագույն լուծումը կարող է լինել, որ բռնություն գործադրող զուգընկերը լքի համատեղ բնակարանը: Հազվադեպ է լինում, երբ հանցագործը պատրաստ է լինում ինքնակամ դա անել: Դուք հնարավորություն ունեք դատարան դիմելու ընդհանուր բնակարանը Ձեր շահագործմանը թողնելու համար: Թե ինչպե՞ս է գործում ընթացակարգը և ինչի՞ց պետք է տեղյակ լինեք, կարող եք կարդալ բրոշյուրի 16-րդ էջը:

## Նոր բնակարան

Ձեզ (և Ձեր երեխաների) համար նոր բնակարան գտնելու համար, կան տարբեր հնարավորություններ.

- Կապվեք բնակարանային գրասենյակի հետ (Wohnungsamt)
- Անհրաժեշտության դեպքում, դիմեք բնակության թույլտվության համար
- Ուսումնասիրեք թերթի գովազդները, գուցե՞ Դուք ինքներդ թերթում հայտարարություն տաք (Ձեր պաշտպանության համար կարող է թվային հասցեագրումը օգտակար լինել)
- Տեղեկացրեք ձեր վստահորդներին բնակության որոնման մասին
- Դուք կարող եք դիմել նաև միջնորդի

Որոշակի պայմաններում աշխատանքի կենտրոնը / սոցիալական ապահովության գրասենյակը ձեռնամուխ կլինեն տեղափոխման, նախապես գրավադրման և/կամ բրոքերային վճարների համար: Հետաքրքրվեք նախապես, արդյո՞ք դա Ձեր դեպքում հնարավոր է: Ուշադրություն դարձրեք վարձակալության գնի և քառակուսի մետրի վրա:

## Տվյալների գաղտնիության պահպանություն

Ձեր իսկ պաշտպանության համար կարող է անհրաժեշտ լինել Ձեր նոր բնակարանի հասցեն գաղտնի պահելը: Այդ նպատակով, Դուք կարող եք դիմել քաղաքացիների գրանցման գրասենյակ կամ քաղաքացիական գրասենյակ՝ տվյալների գաղտնի պահելու համար (հեռախոսային տեղեկատուին՝ քաղաքային վարչարարությանը): Դուք պետք է հստակեցնեք, որ Ձեր (և/կամ Ձեր երեխաներին) կյանքին, առողջությանը կամ անձնական ազատությանը վտանգ կսպառնա, եթե Ձեր բնակության հասցեն որևէ մեկին փոխանցվի: Կարող եք նաև երդվել: Այդ դեպքում, քաղաքացիների գրանցման գրասենյակը իրավունք չի ունենա, Ձեր հասցեն որևէ մեկին փոխանցելու: Ուշադրություն դարձրեք, որ հայտը պետք է նորացվի մինչև սահմանված ժամկետի ավարտը: Համապատասխան դիմում այլ պետական հաստատությունների և իրավասու մարմինների կամ իրավաբանների համար գոյություն չունի: Հետևաբար, Դուք պետք է յուրաքանչյուր առանձին դեպքում նշեք, որ Ձեր տվյալների գաղտնիությունը պետք է պահվեն:

# Ինչ՞ով պետք է ապրեն

